«Այս պարգևները գալիս են Աստծուց»

Կարդացեք Վարդապետություն և Ուխտեր 46.13–26 և նշեք տարբեր հոգևոր պարգևներ, որոնք Աստված տալիս է Իր զավակներին: Ավելի լավ հասկանալու համար, թե ինչպես կարող են այս պարգևները օգտակար լինել Աստծո զավակներին, յուրաքանչյուր հատված համադրեք համապատասխան սցենարի հետ:

Հոգևոր պարգևներ	
1. Վարդապետություն և Ուխտեր 46.13	A. Որպես Երիտասարդ Կանանց իր դասարանի նախագահ ծառայելու ընթացքում Միշելը կարողացել է ճանաչել իր դասարանի անդամների տարբեր ուժեղ կողմերը: Դա օգնել է նրան տալ այնպիսի հանձնարարություններ, որոնք հնարավորություն են տվել իր դասարանի անդամներին իրենց ներդրումն ունենալ և ծառայել իմաստալից եղանակներով:
2. Վարդապետություն և Ուխտեր 46.14	B. Երբ Սամանթան լսում է ուրիշների վկայությունները, նա վստահ չէ, որ կարող է միանալ նրանց և ասել, որ ինքը գիտի, որ Եկեղեցին ճշմարիտ է: Բայց նրանց վկայությունները լսելը մեծացնում է նրա հավատքը Փրկչի հանդեպ: Այս համոզմունքը ոգեշնչում է նրան շարունակել հավատարիմ ապրել:
3. Վարդապետություն և Ուխտեր 46.15	C. Լյուսին հրավիրված է երեկույթի: Թեև ոչ ոք իրեն մանրամասներ չի հայտնել, նա անհանգստություն ունի իր մասնակցության հետ կապված: Նա քաղաքավարությամբ մերժում է հրավերը, և թեև դա դժվար է, նա զգում է, որ ճիշտ է անում:
4. Վարդապետություն և Ուխտեր 46.16	D. Տերը օգնեց շատ մարգարեների կանխագուշակել ապագա իրադարձությունները, այդ թվում՝ Հիսուս Քրիստոսի ծառայությունը (տես Եսայիա 7.14, 1 Նեփի 11.27–28, Մոսիա 3.5–10):
5. Վարդապետություն և Ուխտեր 46.17–18	E. Ռոբերտը, ձգտելով ապրել ավետարանով, հետևողականորեն աղոթելով և ուսումնասիրելով սուրբ գրությունները հասկացել է, որ Հիսուս Քրիստոսն իր Փրկիչն է:
6. Վարդապետություն և Ուխտեր 46.19–20	F. Երեց Վասկեսի և Երեց Քոքսի համար միսիոներական աշխատանքը դժվար է եղել: Այնուամենայնիվ, նրանք վճռական են ծառայելու Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքով: Ժամանակի ընթացքում նրանք սկսում են տեսնել, որ սրտերը փափկում են և հրաշքներ են տեղի ունենում այն մարդկանց կյանքում, որոնց իրենք ուսուցանում են:
7. Վարդապետություն և Ուխտեր 46.21	G. Երբ Մարկոսը հիվանդ է, նա գիտի, որ կարող է իր հորից քահանայության օրհնություն խնդրել: Բազմաթիվ առիթներով այս օրհնությունները նրան խաղաղություն և ուժ են տվել:
8. Վարդապետություն և Ուխտեր 46.22	H. Սոցցանցերում տեղադրված մի գրառում ստիպել էր Էլիսի ընկերներից մեկին կասկածի տակ դնել իր հավատքը: Երբ նա կիսվեց գրառումով Էլիսի հետ, Էլիսը հասկացավ, որ այդ տեղեկությունը Աստծուց չէ:
9. Վարդապետություն և Ուխտեր 46.23	I. Ջուդիին խնդրեցին ուսուցանել Երիտասարդ Կանանց իր դասարանում: Երբ նա փնտրում էր Երկնային Հոր օգնությունը, զգաց, որ առաջնորդություն է ստանում իր նախապատրաստության ընթացքում և կարողացավ բովանդակալից դաս ուսուցանել:
10. Վարդապետություն և Ուխտեր 46.24–25	J. Քույր Էրիքսոնը կանչվել է ծառայելու միսիայում մեկ այլ երկրում: Աստծո օգնությունը փնտրելով և լեզուն սովորելու վրա աշխատելով՝ նա տեսնում է, որ կարողանում է հասկանալ ուրիշներին և հզոր եղանակով կիսվել իր վկայությամբ:

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_192-1